

բարերարութեան մեծութիւնը... ինչպէս որ վայել է Ձեր Գերապատիւ եղբայրութեան...» (23)

Այս նամակը կարգալէ եւ վարդանովիչէ լուսարանութիւններ առնելէ ետք, Առաքելական Նուիրակը անպատեհ եւ անվաւեր կը դատէ անոր առաքումը իբրեւ օգնական վիճակաւոր Լէոպոլտոյ, գլխաւորաբար այն պատճառաւ որ Ս. Քահանայապետը արդէն հոգ կը տանի թեմին (24) :

Այս հանգամանքներուն մէջ, Արհի. Ռանուցցի 10 Յունուար 1672ին ունկնդրութիւն մը կ'ունենայ թագաւորէն, եւ կը խնդրէ Նորին Վեհափառութենէն, որ վարդանովիչ Եպիսկոպոսը հեռացուի Լեհաստանէն: Սակայն Վեհապետն ու թագաւորութեան Փոխ-Դիւանապետը, Գերապայծառ Անդրէաս Olszowski, նկատի ունենալով վարդանովիչի բազմաթիւ հետեւորդներն ու համակիրները եւ հայոց յանձնարարականներն ի նպաստ անոր, զայն կը պաշտպանեն, յայտարարելով՝ թէ ան մեծ յանցանք մը չէր գործած, ձեռք ձգելով Լէոպոլտոյ օգնական Եպիսկոպոսի տիտղոսը: Եւ Փոխ-Դիւանապետը իր կողմէ կը յաւելու՝ թէ լաւ պիտի ըլլար, եթէ Ս. Աթոռը հաստատէր վարդանովիչը այս պաշտօնին մէջ: Ի լուր այս յայտարարութիւններուն, Առաքելական Նուիրակը կը պատասխանէ՝ թէ վարդանովիչ յաճախ ցոյց

(23) Անդ 260-261

(24) Անդ 262: